

Բանալի բառեր՝ գյուղատնտեսություն, բյուջետային հայտ, ռիսկեր, վարկերի տոկոսադրույք, կաթիլային ոռոգում, լիզինգ, ինտենսիվ այգի, ապահովագրություն:

ՀՏԴ 338.43

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՈՒՄԻ ԴՈՐՈՒՄԻ ԲՅՈՒՋԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԾՐԱԳՄԱՆ ՈՂԻՆԵՐԸ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՍԿԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՅԱԿՐԱՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վտենախոսության թեմա՝
**ՀՀ գյուղատնտեսության ոլորտի բյուջետային ծրագրերի
ստեսական արդյունավետության բարձրացման ուղիները**

Լուիզա ՀՈՒՆԱՆՅԱՆ
ՀԱՄԳ
հայցորդ

Գիտական ղեկավար՝
Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հանրապետության գյուղատնտեսությունը հանդիսանում է երկրի տնտեսության առաջնահերթ ոլորտներից մեկը: 2012-2016թթ. միջին տվյալներով, գյուղատնտեսությունն ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 17.5%-ը, միայն 2016թ. այդ ցուցանիշը կազմել է 15.9%¹: Ներկայումս ազդու արտադրության ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսական համակարգ, որը ներառում է ավելի քան 317.3 հազար գյուղացիական տնտեսություն², գյուղատնտեսության սպասարկման, գյուղվթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Գյուղատնտեսությունը երկրի պարենային անվտանգության ապահովման հետ մեկտեղ՝ կարևոր նշանակություն ունի հանրապետությունում զբաղվածության ապահովման ու եկամուտների ձևավորման, գյուղական բնակավայրերի զարգացման, երկրի արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի բարելավման և այլ դրական արդյունքների ապահովման համար:

Գյուղատնտեսության ոլորտի առանձնակի կարևորությունը հաշվի առնելով՝ ազարային քաղաքականությունը հիմնականում իրականացվում է պետական բյուջեից ֆինանսավորվող մի շարք ծրագրերի միջոցով: Վերջին տարիներին ՀՀ պետական բյուջեի միջոցներով մասնավորապես իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման:
- Բույսերի պաշտպանության:
- Հողերի ազդեցիկական հետազոտության և բերրիության բարձրացման:
- Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման:
- Գյուղական խորհրդատվական ծառայությունների:
- Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման:
- Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռք

բերման:

- Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռք

բերման:

- Տոհմային երինջների ձեռք բերման և այլ ծրագրեր:

Նշված ծրագրերը վերջին տարիներին հիմնականում կրել են շարունակական բնույթ և որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսության կայունությանը, ռիսկերի մեղմմանը, նյութական ու ֆինանսական (վարկային) ռեսուրսների մատչելիության բարձրացմանը և այլ դրական արդյունքների ապահովմանը: 2017թ. մեկնարկել է Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը, իսկ 2018 թվականին նախատեսվում են մի շարք նոր ծրագրեր և որոշ ծրագրերի մեխանիզմների ու պայմանների բարելավում: Հիշատակված ծրագրերն ընդգրկվել են ՀՀ 2018-2020թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում³ և ներառված 2018թ. բյուջետային հայտերում:

Ծրագրային բյուջետավորման պահանջներից, մասնավորապես՝ ծրագրի արդյունավետության և հրապարակայնության բարձրացման նկատառումներով, անհրաժեշտ է ըստ առանձին ծրագրերի իրականացնել հետևյալ փոփոխությունները:

- **Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում. ըստ որի՝**

ծրագրի յուրաքանչյուր շահառուի վարկի գումարը նախկին՝ մինչև 3 մլն դրամի դիմաց սահմանվել է մինչև 10 մլն դրամ, մարման ժամկետը մինչև 5 տարի, նախկին 2 տարվա դիմաց: Պարտադիր պայման է վարկառուների ուսուցումը և համապատասխան սերտիֆիկատի առկայությունը: Վարկերը սոցիալական աջակցություն ստացող սահմանափակ

¹ ՀՀ ԱԿԾ, Պարենային ապահովություն և արքատություն: 2016թ. հունվար-դեկտեմբեր: Վիճակագրական տեղեկագիր, Երևան 2017, էջ 9

² ՀՀ ԱԿԾ, ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները, Երևան 2016, էջ 33

³ ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի ՀՀ 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N818-Ն որոշում

բնակավայրերին և գյուղատնտեսական կոպերատիվներին տրամադրել 3% տոկոսադրույթով, իսկ մնացած համայնքներին՝ 5%-ով: Առաջարկվող կառուցակարգով ծրագիրը կգործի 2017թ. աշնանից: 2017թ. ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 1163.0 մլն դրամ, իսկ 2018-2020թթ. յուրաքանչյուր տարի՝ 2,030.9 մլն դրամ:

• **Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցություն ծրագիրը. որը՝**

հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017թ. մարտի 17-ի N 11-31 արձանագրային որոշմամբ, որով որպես լիզինգի աջակցության պայմաններ նախատեսվել են՝ 3-10 տարի մարման ժամկետ, տարեկան մինչև 9% տոկոսադրույթ, որից՝ 7 տոկոսային կետը սուբսիդավորվող, իսկ լիզինգի կանխավճարը սահմանվել է 20%:

Ծրագրի նպատակը՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն է, արդյունքում գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա տարեկան նորացնել շուրջ 500 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 225 միավոր տրակտոր՝ հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի շուրջ 2.0%-ը, որոշակիորեն բարձրացնել գյուղատնտեսությունում մեքենայացման մակարդակը: Ծրագրի իրականացման համար 2018թ. նախատեսվում է հատկացնել 270.0 մլն դրամ, 2019թ.՝ 362.0 մլն դրամ և 2020թ.՝ 428.0 մլն դրամ:

• **Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորում**

Հայաստանում ոռոգումն իրականացվում է հիմնականում մակերեսային եղանակով, որի դեպքում առկա են մի շարք թերություններ, մասնավորապես՝ ջրային ռեսուրսների խիստ դեֆիցիտը զգալի բացասական ազդեցություն է թողնում գյուղատնտեսական մշակաբույսերի կայուն ջրամատակարարման վրա և ոռոգման ջրի թերի կամ ուշացումներով մատակարարման պատճառով արձանագրվում է բերքատվության անկում (կամ ընդհանրապես կորուստ): Այդ առումով կարևորվում է ոռոգման ժամանակակից եղանակների ներդրումը ոռոգելի հողատարածություններում:

Ոռոգման կաթիլային եղանակը շատ արդյունավետ է հատկապես՝ բանջարեղենատնային ու բազմամյա տնկարկների ոռոգման համար: Այն նպատակահարմար է ինչպես փոքր տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբով արտադրությունների համար: Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման նպատակով անհրաժեշտ է սուբսիդավորել կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման նպատակային վարկերի տոկոսադրույթները: Վարկերը կտրամադրվեն 3 տարի մարման ժամկետով, առավելագույնը 14% տոկոսադրույթով, որի 12 տոկոսային կետը կսուբսիդավորվի: Տարեկան կաթիլային ոռոգման համակարգեր կանցկացվի շուրջ 1600 հա գյուղատնտեսական հողատեսքերում: Ծրագրի իրականացման համար 2018թ. նախատեսվում է հատկացնել 114.7 մլն դրամ, 2019թ.՝ 313.3 մլն դրամ և 2020թ.՝ 425.2 մլն դրամ:

• **Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ազրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորում**

Այս ծրագիրը թեյադրված է վերջին տարիների գյուղատնտեսական հումքի մթերման ոլորտում առկա հիմնախնդիրներով, հատկապես՝ սահմանափակ ծավալներով գնումների և գնված հումքի դիմաց վճարումների ուշացման: Նոր ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում զբաղված իրավաբանական անձանց պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների նպատակով տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույթի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության բարձրացում: Վարկերը կտրամադրվեն առավելագույնը 12% տոկոսադրույթով, որի 9 տոկոսային կետը կսուբսիդավորվի: Վարկերի մայր գումարը կկազմի շուրջ 18.0 մլրդ դրամ, իսկ վարկերը կտրամադրվեն 1 տարի ժամկետով, մեկ տնտեսավարողին տրամադրվող վարկի առավելագույն գումարն է կկազմի 1.0 մլրդ դրամ:

Ծրագրի իրականացման արդյունքում կապահովվի գյուղատնտեսական մթերքների գնման դիմաց գյուղացիական տնտեսություններին կատարվող վճարումների ժամանակին իրականացումը: Ի դեպ, վճարումը կիրականացվի ուղղակի բանկային կառուցի կողմից, մթերման մասին տեղեկատվություն ստանալուց հետո: Վերջինիս *շնորհիվ* կբարձրանա գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի մրցունակության մակարդակը, որի արդյունքում կավելանան գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի արտադրության ու արտահանման ծավալները, կաճի հանրապետության մշակող արդյունաբերության արտադրանքի արտադրության ծավալում ազրովերամշակման արտադրության արտադրանքի մասնաբաժինը: Ծրագրի իրականացման համար 2018-2020թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 998.9 մլն դրամ:

• **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորում**

Ծրագրով նախատեսվում է մատչելի պայմաններով, մասնավորապես՝ նպատակային վարկերի տոկոսադրույթի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում 2018թ. սկսած՝ տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի ներդրում: Վարկերը կտրամադրվեն 7 տարի մարման ժամկետով, առավելագույնը 14% տոկոսադրույթով, որի 12 տոկոսային կետը կսուբսիդավորվի: Նախատեսվում է հակակարկտային ցանցերով պատել տարեկան շուրջ 1000 հա խաղողի և պտղատու այգիներ: Ծրագրի իրականացման համար 2018թ. նախատեսվում է հատկացնել 700.6 մլն դրամ, 2019թ.՝ 1294.1 մլն դրամ և 2020թ.՝ 1780.5 մլն դրամ:

• **Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձարկման ծրագրի իրականացման համար պետական աջակցություն**

Ծրագրի հիմնական նպատակը՝ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձարկման ծրագրի իրականացման միջոցով ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման նախադրյալների ստեղծումն է և այդ համակարգի ներդրման հիմնական մոտեցումների հստակեցումը:

Ծրագրով նախատեսվում է 2018 թվականից սկսած՝ իրականացնել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձարկման ծրագիր՝ պետական աջակցությամբ, որի շրջանակներում մասնակի կսուբսիդավորվի փորձարկման ծրագրին մասնակից տնտեսավարողների ապահովագրավճարը և կցուցաբերվի կազմակերպական աջակցություն: Ծրագիրն իրականացվելու է KFW Գերմանական զարգացման բանկի ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ: Ծրագրի իրականացման համար 2018-2020թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 885.0 մլն դրամ:

• **Ինտենսիվ այգիների հիմնման համար պետական աջակցություն**

Ծրագրով նախատեսվում է ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած, ինտենսիվ, մինչև 10 հեկտար այգետնկումներ կատարող տնտեսավարողներին պետական աջակցության տրամադրում՝ նպատակային վարկերի 9 տոկոսային կետի սուբսիդավորմամբ: Տվյալ մեխանիզմի կիրառումից ակնկալվում է նոր ինտենսիվ այգիների հիմնման գործընթացը,

կապելանան պողատու այգետարածքները շուրջ 180 հեկտարով և հին, ցածր բերքատու այգիներին կփոխարինեն բարձր բերքատու, արտահանող ու վերամշակող ընկերությունների պահանջներին համապատասխանող սորտերի այգիները: Ծրագրի իրականացման համար միայն 2018թ. համար նախատեսվում է հատկացնել 398.9 մլն դրամ:

• **Սերմաբուծության մասնագիտացած տնտեսությունների զարգացման ծրագիր**

Ծրագրով նախատեսվում է ձեռք բերել 12 միավոր գյուղատնտեսական տեխնիկա:

Տորենի, գարու, առվույտի և կորնզանի առաջնային սերմաբուծություն կազմակերպելու նպատակով ձեռք բերված տեխնիկան կտրամադրվի «Գյուճուր սելեկցիոն կայան» ՓԲԸ-ին, «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին, «Սյունիքի սերմարտադրողների միություն» ՍՊԸ-ին և Հայ տեխնոլոգիական խումբ հիմնադրամին, քանի որ վերջիններս ունեն համապատասխան ներուժ և մասնագիտական երկար տարիների փորձ: Ծրագրի իրականացման արդյունքում նախադրյալներ կստեղծվեն հանրապետությունում ցորենի, գարու, առվույտի ու կորնզանի սերմաբուծական տնտեսությունների զարգացման համար եւ դրանով իսկ կբարձրանա տեղական արտադրանքի մրցունակությունը: Որակյալ, մատչելի գներով սերմացուների օգտագործման արդյունքում կավելանան նաև գյուղացիական տնտեսությունների եկամուտները: 2018 թվականին ծրագրավորվել է ՀՀ պետական բյուջեից հատկացնել 49.0 մլն դրամ:

• **Հայաստանի Հանրապետությունում կարտոֆիլի կենսատեխնոլոգիական եղանակով վիրուսազերծ տնկանյութի արտադրության կազմակերպում**

Կարտոֆիլի արտադրության ծավալների ավելացումը կնպաստի պոտենցիալ բարձր բերքատվություն ունեցող սորտերի ներդրմանը և բարձրորակ, վիրուսազերծ տնկանյութի արտադրությանը: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է կարտոֆիլի միջին բերքատվության բարձրացում մինչև 50%, իսկ 2018թ. համար նախատեսվում է հատկացնել 19.2 մլն դրամ, 2019 և 2020թթ. տարեկան 18.2 մլն դրամ:

• **Կարտոֆիլի կենսատեխնոլոգիական եղանակով վիրուսազերծ տնկանյութի արտադրության խթանում**

Ծրագրով նախատեսվում է կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութի արտադրության կազմակերպման համար ներդնել աերուպոնիկ վիրուսազերծ մոդել: Ծրագրի իրականացման 3-րդ տարում կարտադրվի շուրջ 1400 տոննա էլիտային վերարտադրության տնկանյութ, որի վերարտադրությունից 4-րդ տարում հնարավոր կլինի արտադրել շուրջ 11.4 հազ. տոննա առաջին վերարտադրության տնկանյութ, որով հնարավոր է ցանք կատարել շուրջ 3000 հա վրա: Ծրագրի դրույթներին համապատասխան տնկանյութ արտադրելու դեպքում 4-րդ տարում արտադրված 1 կգ տնկանյութի ինքնարժեքը կկազմի շուրջ 60 դրամ, որը ֆերմերներին կվաճառվի 100 դրամով՝ ներկայիս 400 դրամի փոխարեն:

Արդյունքում գյուղացիական տնտեսությունները միայն սերմացուի ձեռք բերման գործընթացում կունենան 3 անգամ ինսյուլություն կամ 1 հեկտարի հաշվով ավելի քան 1 մլն դրամ:

Բացի տնկանյութի ձեռք բերման մեջ տնտեսում կատարելուց, եկամուտները ավելանալու են նաև բերքի հավելման արդյունքում:

Ներկայիս 1 հա-ից 20-23 տոննա բերքատվության ծավալները կավելանան մինչև 50%՝ կազմելով 30-35 տոննա: Արդյունքում կավելանան ինչպես գյուղացիական տնտեսությունների եկամուտներն, այնպես էլ հանրապետության համախառն արտադրանքի ծավալները:

Ծրագիրը փոխկապակցված է «Հայաստանի Հանրապետությունում կարտոֆիլի կենսատեխնոլոգիական եղանակով վիրուսազերծ տնկանյութի արտադրություն» ծրագրի հետ: Նշված փոխկապակցված ծրագրերի իրականացման արդյունքում կհիմնվի կենսատեխնոլոգիական եղանակով վիրուսազերծ տնկանյութի արտադրության լաբորատորիա և աերուպոնիկ եղանակով տնկանյութի բազմացման համակարգ, որը գործելու է պետական համակարգում և գյուղացիական տնտեսություններին շարունակաբար ապահովելու և բարձրորակ տնկանյութերով: 2018 թվականին ծրագրավորվել է 72.0 մլն դրամ բյուջետային միջոցների հատկացում:

Վերը նշված նոր մեխանիզմներով իրականացվող և նախատեսվող ծրագրերը պարունակում են որոշակի ռիսկեր, որոնց ժամանակին գնահատումը և դրանց մեղմման քայլերի ձեռնարկումը կարող է հանդիսանալ այդ ծրագրերի հաջող իրականացման կարևոր նախադրյալներից մեկը: Հիշատակված ռիսկերը և դրանց մեղմման մոտեցումները մեր դիտարկումներով կարող են լինել հետևյալները:

1. **Գյուղատնտեսությունում տրամադրվող վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորման ծրագրի** ռիսկեր պարունակող հանգամանքները, ըստ որոնց՝ նախատեսված է վարկի մայր գումարի չափ՝ 3-10 մլն դրամ: Հաշվի առնելով հանրապետության գյուղատնտեսության ոլորտում գործող տնտեսությունների փոքր չափերը, գյուղացիական տնտեսությունների թվի 59.6%-ն ունեն մինչև 1 հա գյուղատնտեսական հող⁴, հետևաբար՝ 3 մլն դրամից ավելի վարկի ձեռք բերման համար տնտեսությունների վարկունակությունը, ինչպես նաև ուսուցման կազմակերպումը և գործարար ծրագրի ներկայացումը կարող է որոշակի խնդիրներ առաջացնել: Նշված ռիսկի մեղմման համար կարևոր է ՀՀ գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական համակարգի և զանգվածային լրատվության միջոցներով վարկավորման նոր մեխանիզմների ու նախապայմանների վերաբերյալ տնտեսավարողներին ժամանակին և պատշաճ իրազեկումը: Այստեղ կարևորվում է նաև խորհրդատվության, ուսուցման կազմակերպումը, անահատական մոտեցումը յուրաքանչյուր տնտեսավարողի նկատմամբ: Խնդիր կարող է լինել մինչև 3.0 մլն դրամ վարկերի պահանջարկ ունեցող տնտեսությունների վարկավորման պահանջարկի ապահովումը: Վերջինիս լուծման հիմնական ուղղությունը կարող է լինել գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորման նոր ծրագրի իրականացումը՝ էլակետ ունենալով նախկինում գործող ծրագրի պայմանները:

2. **Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի** համար ռիսկային է համարվում նախատեսված ծավալով տեխնիկայի պահանջարկի ձևավորումը: Վերջինիս մեղմման համար կարևոր է համարվում ծրագրի վերաբերյալ գյուղատնտեսությունում տնտեսավարողներին պարբերաբար իրազեկումը, ֆինանսական, մատակարար և մասնակից կազմակերպությունների հետ համագործակցված աշխատանքը, ինչպես նաև համապատասխան հուշագրերի ստորագումը նշված կազմակերպությունների ու ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջև և սահմանված պահանջների կատարումը: Կարևոր է համարվում նաև ծրագրում ընդգրկվող տեխնիկական հավաքակազմի տեսականու ընդլայնումը, միաժամանակ՝ գյուղատնտեսական տեխնիկայի հետ մեկտեղ, ծրագրում ներառել նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման տեխնոլոգիական սարքավորումներ:

3. **Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորում** ծրագրի առումով կարևոր է համարվում ծրագրի գրավորությունը տնտեսավարողների համար, քանի որ կաթիլային ոռոգման համակարգերի ներդրումը պահանջում է մեծ ֆինանսական միջոցներ, իսկ ծրագրի՝ որպես խթանիչ,

⁴ Հաշվարկների համար հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները, ՀՀ ԱԿԾ, Երևան 2016թ. տվյալները էջ 57, 59

տրամադրվող վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը, մեր կարծիքով, մեծ խթան չի կարող հանդիսանալ: Հետևաբար՝ այստեղ կարևոր է համարվում ծրագրի մեկնարկից առաջ կաթիլային ոռոգման արդյունավետության վերաբերյալ իրազեկման ու խորհրդատվության կազմակերպումը, մասնագիտացած մատակարար կազմակերպությունների և ֆինանսական կառույցների հետ նախապատրաստական համագործակցված աշխատանքի իրագործումը, մասնավորապես՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և մասնակից կառույցների միջև հուշագրերի ստորագրումն ու տարբեր կողմերի համագործակցված աշխատանքի կազմակերպումը: Նույնը վերաբերում է նաև **գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում ծրագրին**, որի իրականացման կարևոր նախապայմաններից մեկը կարող է լինել վերը նշված աշխատանքների իրականացումը:

4. Ինտենսիվ այգիների հիմնման պետական աջակցության ծրագիրը նույնպես պարունակում է ռիսկեր: Ինտենսիվ այգիների հիմնումը պահանջում է մեծ ներդրումներ, քանի որ 1 հա այգու և առաջին տարվա խնամքի համար ծախսերը, առանց հակակարկտային ցանցերի, կազմում է 13-15 մլն դրամ: Ծրագրով նախատեսվում է որպես աջակցություն նպատակային վարկերի տրամադրում, որի 9 տոկոսային կետը սուբսիդավորվելու է: Նշված ծախսերի պայմաններում այս մեխանիզմը *կարող է Էական խթան չհանդիսանալ* այգետնկումների իրականացման համար: Այս ռիսկի մեղմումը հնարավոր է համարվում գյուղատնտեսությունում տնտեսավարողների հետ նախապատրաստական աշխատանքների իրականացումը, նախնական հայտերի ընդունումը, դրանց ուսումնասիրումը, հիմնավորված լինելու դեպքում շահառուներին համապատասխան խորհրդատվության մատուցումը, այգետնկումներ իրականացնող մասնագիտացած կառույցների, ֆինանսական կառույցների և ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համապատասխան հուշագրի ստորագրումը, արդյունքում աշխատանքների հստակ տարանջատումը, ծրագրի ընթացքում պարբերաբար մոնիթորինգի իրականացումն ու խնդիրների բացահայտումը, ինչպես նաև դրանց լուծման համապատասխան քայլերի ձեռնարկումը:

5. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի հիմնական ռիսկերը կապված են դրանց նպատակային օգտագործման, մասնավորապես դրանք հումքի գնման պայմանագրերի հիման վրա տրամադրման հետ: Այս ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել նախապատրաստական աշխատանք՝ հումքի գնման պայմանագրերի կնքման, դրանց հաշվառման և վերջինիս ծավալներից ելնելով՝ վարկավորման իրականացման:

6. Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձարկման ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը նույնպես ռիսկային է համարվում: Դրա հիմնական պատճառներից է այդ համակարգի՝ գյուղատնտեսության ոլորտում ներդրված չլինելը, տեղական ապահովագրական ընկերությունների՝ այդ ուղղությամբ փորձի բացակայությունը: Հիմնախնդիր է նաև ապահովագրության ոչ արդյունավետ մեխանիզմների ընտրությունը: Նշված ռիսկերի մեղմման քայլերից կարող է լինել այս գործընթացում միջազգային մասնագիտացած կազմակերպությունների և միջազգային փորձագետների ընդգրկումը, նաև առաջարկվող մեխանիզմների փորձարկումը և դրանց արդյունքներից ելնելով՝ հիմնական ներդրման քայլերի ձեռնարկումը:

Մյուս ծրագրերը որոնք ուղղված են սերմնաբուծության զարգացմանը, Էական ռիսկեր չեն պարունակում, քանի որ նման ուղղվածության պետական ծրագրերի փորձը առկա է, կան որոշակիորեն փորձարկված մեխանիզմներ, որոնք կարող են կիրառություն ունենալ:

Հիշատակված ծրագրերի իրականացման նշված ռիսկերի *հաշվի առնելը* և դրանց մեղմման ուղղությամբ առաջադրված քայլերի ձեռնարկումը կարող է կարևոր նախապայման հանդիսանալ՝ նշված ծրագրերի հաջող իրականացման համար:

Ներկայացվել է 19.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.